**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ «ՀԱՅՌՈՒՍԳԱԶԱՐԴ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԵՎ ՀԵՏԱԳԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան 19 դեկտեմբերի 2013թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Ա.Մովսիսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց դատական նիստում բանավոր ընթացակարգով քննեց «2013 թվականի դեկտեմբերի 2-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության կառավարության միջեւ

«ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի առուվաճառքի եւ հետագա գործունեության պայմանների մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 12.12.2013թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Լսելով գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի բացատրությունը, հետազոտելով քննության առարկա համաձայնագիրը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

**1.** Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության կառավարության միջեւ «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի առուվաճառքի եւ հետագա գործունեության պայմանների մասին համաձայնագիրը /այսուհետ՝ Համաձայնագիր/ ստորագրվել է Երեւանում՝ 2013թ. դեկտեմբերի 2-ին, ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարի կողմից:

Համաձայնագրի նախաբանին համապատասխան՝ վերջինիս հիմնական նպատակն է Կողմերի էներգետիկ շուկաների եւ գազափոխադրման ենթակառուցվածքի զարգացումը, գազի բնագավառում երկարատեւ փոխշահավետ համագործակցության խթանումը, «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի հետագա գործունեության համար բարենպաստ պայմանների, ինչպես նաեւ գազամատակարարման անհրաժեշտ հուսալիության ապահովումը:

Գազի բնագավառում Կողմերը պարտավորվում են խթանել ու խորացնել իրենց համագործակցությունը՝ նոր տեխնոլոգիաների մշակման եւ ներդրման, գազի խնայողության ասպարեզում համատեղ ծրագրերի մշակման եւ իրականացման, միասնական փոխհամաձայնեցված տեխնիկական քաղաքականության վարման, հնարավոր վթարային իրավիճակների ծագման դեպքում փոխադարձ օգնության ցուցաբերման ու այլ ուղղություններով:

Ընդհանուր առմամբ, Համաձայնագիրը հնարավորություն է ընձեռում եւ միտված է փոխշահավետության սկզբունքի հիման վրա՝ Կողմերի միջեւ գազի ոլորտում երկարատեւ ու արդյունավետ տնտեսական կապերի հետագա զարգացման համար նպաստավոր պայմաններ ստեղծելուն:

**2.** Քննության առարկա Համաձայնագիրը բաղկացած է նախաբանից, թվով 11 հոդվածներից եւ Համաձայնագրի անքակտելի մաս կազմող Հավելվածից:

Համաձայնագրի 1-ին հոդվածը նվիրված է դրա առարկային, այն է՝ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի բաժնետոմսերի փաթեթի օտարմանն առնչվող իրավահարաբերությունների կարգավորմանը:

Համաձայնագրով սահմանվում են «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի բաժնետոմսերի փաթեթի /12 600 000 հատ սովորական անվանական բաժնետոմսեր/ առուվաճառքի պայմանները, մասնավորապես, բաժնետոմսերի փաթեթի «Գազպրոմ» ԲԲԸ-ի սեփականությանը հանձնման, դրա դիմաց վճարման, ինչպես նաեւ «Գազպրոմ» ԲԲԸ-ին նշված բաժնետոմսերի փաթեթի սեփականության իրավունքով հանձնման կարգն ու ժամկետները ու մի շարք այլ էական իրավապայմաններ:

Հայկական Կողմը պարտավորվում է սահմանված ժամկետում ապահովել ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարության եւ «Գազպրոմ» ԲԲԸ-ի միջեւ նշված բաժնետոմսերի առուվաճառքի պայմանագրի կնքումը, համաձայն որի՝ մինչեւ 2014թ. հունվարի 31-ը «Գազպրոմ» ԲԲԸ-ի սեփականությանն է հանձնվում «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի բաժնետոմսերի փաթեթը՝ 63 333 900 000 հայկական դրամ արժեքով:

«Գազպրոմ» ԲԲԸ-ն պարտավորվում է հիշատակված բաժնետոմսերի փաթեթը՝ որպես սեփականություն իրեն անցնելուց հետո, մեկ ամսվա ընթացքում ՀՀ պետական բյուջե վճարել բաժնետոմսերի փաթեթի նշված արժեքը:

Համաձայնագրի 2-րդ հոդվածով նախատեսվում է, որ դրանով ստանձնված համապատասխան պարտավորությունների կատարման հսկողությունն իրականացնելու են Կողմերի պետությունների իրավասու մարմինները՝ ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների եւ ՌԴ էներգետիկայի նախարարությունները:

Հայաստանի Հանրապետություն բնական գազի առաքման ծավալները, ժամկետները, գինը եւ այլ պայմանները սահմանվելու են ինքնուրույն՝ երկարաժամկետ պայմանագրերի Կողմեր հանդիսացող «Գազպրոմ» ԲԲԸ-ի եւ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից: Միաժամանակ, Ռուսական Կողմը երաշխավորում է բնական գազի առաքումը Հայաստանի Հանրապետություն այն ծավալներով, որոնք բավական են ՀՀ ներքին կարիքների լրիվ բավարարման համար /հոդված 3/:

Համաձայնագրով կարգավորվում են գազի բնագավառում Կողմերի համագործակցությանը, ներդրումների երաշխիքներին, վեճերի լուծման կարգին, Համաձայնագրի ուժի մեջ մտնելուն առնչվող, ինչպես նաեւ փարաբնույթ այլ հարցեր:

Համաձայնագրի անբաժանելի մաս համարվող Հավելվածը նախատեսում է ՀՀ լիազորված մարմնի կողմից ՀՀ սպառողներին «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից իրացվող բնական գազի եւ էլեկտրաէներգիայի գների սահմանման կարգը:

**3.** Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- երաշխավորում է, որ ՌԴ տարածքից ՀՀ առաքվող եւ ՀՀ ներքին շուկայում սպառման համար նախատեսված բնական գազը ենթակա չէ արտահանման ՀՀ սահմաններից դուրս,

- ապահովում է ՀՀ իրավասու մարմնի կողմից ՀՀ սպառողներին իրացվող գազի գնի սահմանումը՝ սույն Համաձայնագրի Հավելվածով սահմանված Կարգին համապատասխան,

- ապահովում է ՀՀ իրավասու մարմնի կողմից ՀՀ սպառողներին իրացվող էլեկտրաէներգիայի գնի սահմանումը՝ սույն Համաձայնագրի Հավելվածով սահմանված Կարգին համապատասխան,

- պարբերաբար /ոչ պակաս, քան տարեկան մեկ անգամ/ սահմանված կարգով վերանայում է իրացվող գազի եւ էլեկտրաէներգիայի գինը,

- երաշխավորում է, որ չի օգտագործի «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի կառավարման հատուկ իրավունքները, որոնք կխախտեն գործող օրենսդրությանը համապատասխան ընկերության բաժնետերերին տրամադրված իրավունքների ծավալը,

- ստեղծում է բարենպաստ պայմաններ Կողմերի գազային եւ էներգետիկ ճյուղերում փոխադարձ ներդրումների համար,

- վարում է մայրուղային գազատարների համակարգերի աշխատանքը կանոնակարգող միասնական փոխհամաձայնեցված նորմատիվային եւ տեխնիկական քաղաքականություն,

- մշակում եւ իրականացնում է Ռուսաստանի Դաշնության հետ գազի խնայողության եւ էներգախնայողության ոլորտում համատեղ ծրագրեր,

- երաշխավորում է, որ ՀՀ տարածքում «Գազպրոմ» ԲԲԸ-ին կամ նրա փոխկապակցված անձանց պատկանող ցանկացած գույքն օգտվում է ՀՀ լիակատար

ու անվերապահ պաշտպանությունից եւ չի կարող ենթարկվել ուղիղ կամ անուղղակի բռնագրավման, ազգայնացման կամ ռեկվիզիցիայի,

- անհապաղ հատուցում է վերը նշված պայմանների խախտման դեպքում այդպիսի գույքի, իրավունքների կամ շահերի արժեքն ԱՄՆ դոլարով /հոդված 6/,

- հետ է գնում՝ համապատասխան պարտավորության չկատարման դեպքում, «Գազպրոմ» ԲԲԸ-ի պահանջով՝ սույն Համաձայնագրի 1-ին հոդվածի համաձայն ընկերությանը փոխանցված բաժնետոմսերի փաթեթը հայկական դրամին համարժեք ԱՄՆ դոլար գնով, ինչպես նաեւ հատուցում է «Գազպրոմ» ԲԲԸ-ի բոլոր վնասները,

- լուծում է Համաձայնագրի կիրառման եւ դրանից բխող պարտավորություն-ների կատարման ընթացքում ծագած վեճերը բանակցությունների միջոցով,

- կրում է միջնորդ դատարանում իր ներկայացուցչության հետ կապված ծախսերը նաեւ այն դեպքում, երբ միջնորդ դատարանն իր որոշմամբ կարող է նախատեսել, որ Կողմերից որեւէ մեկը կրելու է ծախսերի մեծ մասը,

- երաշխավորում է, որ մինչեւ 2043թ. դեկտեմբերի 31-ը ՀՀ որեւէ նորմատիվ իրավական ակտով չեն փոփոխվի կամ չեղյալ հայտարարվի կամ այլ կերպ ոտնահարվի սույն Համաձայնագրի ստորագրման ամսաթվի դրությամբ «Գազպրոմ» ԲԲԸ-ի, «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի ու դրանց համապատասխան իրավահաջորդների իրավունքներն ու շահերը /հոդված 7/,

- երաշխավորում է, որ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից սովորական տնտեսական գործունեության մեջ օգտագործվող տեղեկությունները չեն կազմում ՀՀ պետական գաղտնիք:

**4.** ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Համաձայնագիրը կոչված է խթանելու գազի ոլորտում Կողմերի արդյունավետ, փոխշահավետ համագործակցությունն ամենատարբեր ուղղություններով, մասնավորապես, Կող-մերի էներգետիկ շուկաների եւ գազափոխադրման ենթակառուցվածքի հետագա զարգացման, ինչպես նաեւ ՀՀ ներքին կարիքների լիարժեք բավարարման նպատակով բնականոն գազամատակարարման հուսալիության ապահովման ուղղությամբ:

Այսպիսով, Համաձայնագրի դրույթներին համապատասխան՝ անհրաժեշտ իրավական պայմաններ են ստեղծվում Հայաստանի Հանրապետություն կանոնավոր գազամատակարարման բնագավառում՝ համագործակցության եւ փոխշահավետու-թյան հիմունքներով Կողմերի միջեւ տնտեսական փոխհարաբերությունների հետագա

ընդլայնման ու խորացման համար, ուստի խնդրո առարկա Համաձայնագրի դրույթները համահունչ են ՀՀ Սահմանադրության 9-րդ հոդվածում ամրագրված սկզբունքներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

**1.** 2013 թվականի դեկտեմբերի 2-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության կառավարության միջեւ «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի առուվաճառքի եւ հետագա գործունեության պայմանների մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

**2.** Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ** **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

19 դեկտեմբերի 2013 թվականի
ՍԴՈ-1131